ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.263

ԱՄՓՈՓՈՒՄ

Սովորելու և սովորեցնելու նպատակը կյանքի տարբեր բնագավառների գիտելիքներն ու հմտությունները փոխանցելն ու կատարելագործելն է: Սակայն գիտությունները իրարից անկախ գոյություն չունեն. դրանք իրար կապելու, դրանց միջև կապուղիներ ստեղծելու համար կարևոր դեր ունի հաղորդակցումը: Հաղորդակցումն առաջին հերթին խոսքային հաղորդակցումն է, որն իրականացնում ենք լեզվի միջոցով:

Հայոց լեզուն՝ որպես պարտադիր ուսուցանվող առարկա, դասավանդվում է հանրակրթական դպրոցում և բուհական համակարգում (բացառությամբ օտար լեզուների թեքումով դպրոցների ու բուհերի): Լեզվի տարբեր մակարդակների ուսուցումը դպրոցում ուղղված է աշակերտների գրագիտության բարձրացմանն ու բառապաշարի հարստացմանը: Բուհում ցանկացած մասնագիտություն ուսուցանվում է լեզվի միջոցով. գրեթե բոլոր ֆակուլտետներում ուսումնասիրում են հայոց լեզու և խոսքի մշակույթ առարկաները:

Ժամանակակից կրթական համակարգում լայնորեն տարածված է նախագծային ուսուցումը, որը հնարավորություն է տալիս ուսուցանվող առարկան սոցիալականացնել ու հանրայնացնել: Մեր հոդվածի շրջանակում մենք անդրադառնում ենք նախ նախագծային աշխատանքի էությանը, ապա դրա օգնությամբ հայոց լեզվի ուսուցման սոցիալակացման հարցերին:

Բանալի բառեր և արտահայտություններ. *նախագծային աշխատանք, հայոց լեզու, խոսքի մշակույթ, սոցիալականացում, միջառարկայական կապ, միջգիտական հարաբերություն, հետազոտական մեթոդ, մարտահրավերային հարց։*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախագծային աշխատանքը հետազոտական և ստեղծագործական մեթոդների համակցված աշխատանք է, որն ունի հիմնահարց, որը լուծում են սովորողը և սովորեցնողը՝ աշխատանքը պլանավորելու, տեղեկատվություն որոնելու, գիտական ու գործնական փաստերը համադրելու ու վերլուծելու ճանապարհով։ Հայոց լեզուն ուսուցանելու նպատակներից մեկը գրական հայերենը հանրայնացնելն է և խոսքում առկա լեզվաոճական մեղանչումները պակասեցնելն ու բացառելը։ Գրական հայերենը պաշտոնական միջավայրի հաղորդակցման լեզուն է, ինչպես նաև հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի, դպրոցի ու գիտական շրջանակների, ուստի բուհական ծրագրում ներառելով ուսուցման նախագծային մեթոդը՝ մենք կարող ենք սոցիալական խնդիր լուծել, քանի որ ցանկացած մասնագիտություն դասավանդվում ու ավանդվում է մայրենի լեզվի միջոցով։

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժության մեջ ուսուցման նոր ձևերի ու եղանակների ի հայտ գալը ժամանակի և հին ու նոր սերունդների՝ իրականության տարբեր ընկալումների հրամայականի հետևանք է, որ լայն առումով ընդգրկում է մանկավարժության զարգացման տարժամանակյա, նեղ առումով՝ համաժամանակյա կտրվածքները։ Հետևապես ուսուցման ավանդական և նոր մեթոդների հարաբերակցված փոփոխությունները կրում են համաժամանակյա բնույթ։

Այդ առումով որպես հետազոտության մեթոդ ընտրվել է համեմատական – զուգադրական մեթոդի համաժամանակյա եղանակը։

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նախագծային ուսուցման մեթոդը ուսուցման կազմակերպման ձև է, որի ընթացքում ուսանողները գիտելիք են ձեռք բերում նախագծային աշխատանքի կատարման ընթացքում:

Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նորություն չէ. այն ծագել է 20-րդ դարի 20-ական թվականներին Ամերիկայի Միացյալ Նահանգներում, իսկ հետո տարածվել նաև Եվրոպայում. այն ընկած է աշակերտակենտրոն ուսուցման հիմքում: Այժմ այն կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, որը թույլ է տալիս սովորողներին դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում:

Գիտելիքը պրակտիկայում ստուգված իրականության ճանաչողության արդյունք է: Գիտելիքներում արտահայտվում է մարդկանց ընդհանրացված փորձը, որը կուտակվել է հասարակական-պատմական պրակտիկայի ընթացքում **(Ամիրջանյան Յու., 2005)**:

Նախագծերի վրա հիմնված ուսուցումը տարբերվում է գիտելիքի հաղորդման հանրագիտարային ավանդական մոտեցումից կամ լսարանային դասերի ձևաչափով գիտելիք հաղորդելու և ստանալու մոդելից:

Նախագծահեն ուսուցման նպատակը տվյալ առարկայի ուղղությամբ սոցիալական նշանակություն ունեցող թեմաների ուսումնասիրումն է: Կամ եթե ավելի պարզ բնորոշենք, ապա նախագծերի վրա հիմնված կրթությունը ձգտում է հաղթահարել դպրոցի ու կյանքի անջրպետը. չէ՞ որ ինչպես լատինական ասացվածքն է հուշում՝ «Ոչ թե դպրոցի, այլ կյանքի համար ենք սովորում»:

Կրթության նկատմամբ ժամանակակից պահանջների իրականացման և նրա սոցիալական դերի բարձրացման համար անհրաժեշտ է կրթական համակարգի արդիականացում, ինչպես նաև կրթության նկատմամբ պետության, հասարակության և անհատի ունեցած վերաբերմունքի փոփոխություն **(Խալաթյան Գ., Թորգոմյան Ս., Հարությունյան Ռ., 2023)**:

Առաջնային պլան մղելով գիտության սոցիալականացման դերը՝ սովորողները ուսուցանվող թեմայի շրջանակում մասնակցում են անկախ, գործողությունների վրա հիմնված ուսումնասիրությունների։

Նախագծային ուսուցումը սովորողներին հնարավորություն է ընձեռում ինքնուրույն սահմանել ուսումնական գործընթացի նպատակները։ Եթե աշխատանքը հաջողված է լինում, ապա կարող է նշանակալի ներդրում ունենալ սովորողների ներկա նպատակներին հասնելու և ապագա նպատակները զարգացնելու գործընթացում **(Բեռնես Հ., Իսլեր Ռ., Վայդինգեր Վ., 2024)**։

Հայաստանի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներում այսօր կիրառվում է ուսուցման այս տեխնոլոգիան։ Սակայն ուսանողները, որոնք որպես պրակտիկանտ ներկայանում են դպրոց, այնքան էլ լավ չեն տիրապետում նախագծային աշխատանքի պահանջներին։

Մենք կարծում ենք, որ նախագծային աշխատանքի ուսումնասիրումը պետք է սկսել բուհից և հենց բուհական շրջանակում իրականացնել այն։

Դասավանդման մեր փորձը ցույց է տալիս, որ հատկապես այն ֆակուլտետներում, որտեղ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկան մասնագիտական չի համարվում, այդտեղ անհրաժեշտ է իրականացնել նախագծային ուսուցում՝ դրանով ապահովելով միջառարկային և միջգիտական հարաբերություններ։

Մենք անհրաժեշտ ենք համարում հայոց լեզվի և խոսքի մշակույթի ուսուցումը բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերում (դա նաև պետական ճիշտ քաղաքականություն է), սակայն դա ինքնանպատակ չպետք է լինի։

Մեր գործունեության ուղենիշը պետք է լինի «հայոց լեզուն անհրաժեշտ է» գաղափարը, որի շուրջ պիտի ծավալվի նախագծի շղթան և հասնի վերջնարդյունքի։ Դրա համար առաջարկվում են նախագծի հետևյալ փուլերը.

1. Հիմնահարց (պրոբլեմ)
2. Նախագծում (պլանավորում)

3. Տեղեկատվության որոնում

4. Նախապատրաստում

5. Պաշտպանություն (պրեզենտացիա)

(https://kznakbnagavar.blogspot.com/2022/02/blog-post.html)

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի ծրագիրը իրականացնում է համալսարանի յոթ ֆակուլտետներում՝ գործնական ձևով: Սույն հոդվածով մենք ցանկանում ենք դասավանդման ընթացքի մեջ նոր երակ ավելացնել, այն է՝ ուսանողի հետ համագործակցության շնորհիվ իրականացնել նախագծային աշխատանք, որը գործնականում կապացուցի խոսքի մշակույթի գիտելիքների կիրառումը այլ մասնագիտությունների համատեքստում:

Նախագծային աշխատանքի այս մոդելը կարելի է կիրառել ինչպես բանասիրական, այնպես էլ ոչ մասնագիտական ֆակուլտետներում, քանի որ այն կարող է իրականացվել ինչպես մասնավոր մասնագիտության (միառարկայական), այնպես էլ մի քանի առարկաների շրջանակներում (միջառարկայական):

Մեր նպատակը հայոց լեզուն սոցիալականացնել է այլ մասնագիտությունների մեջ ու միջոցով: Նախագծային աշխատանքներ կարող ենք հանձնարարել համալսարանի բոլոր ֆակուլտետներում, քանի որ հայոց լեզուն ներառված է բոլոր մասնագիտությունների առարկայացանկում:

Այս դեպքում տեղին է գործադրել նախագծային մեթոդը: Այն հետազոտական և ստեղծագործական մեթոդների համակցված աշխատանք է: Դասավանդողը ստանձնում է համակարգողի ու խորհրդատուի դեր, իսկ սովորողը իր ունեցած գիտելիքների, ճանաչողական հմտությունների, տեղեկատվական տիրույթում կողմնորոշվելու շնորհիվ լուծում է առաջադիր խնդիրը:

Հայոց լեզվի սոցիալականացումը պետք է իրականացվի գործնական քայլերի միջոցով: Այս կամ այն ֆակուլտետում առարկան դասավանդելով և քննության ավարտելով մեր առարկայի վերջնարդյունքը թերի կմնա: Ոչ մասնագիտական

ֆակուլտետներում մենք ունենք ինքնուրույն աշխատանքին հատկացված ժամեր, որոնք կարելի է լրացնել նախագծային աշխատանքով։

Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլերն են.

1. Նախագծային թեմայի ընտրություն
2. Թեմայի տրոհում ենթաթեմաների
3. Նախաձեռնող խմբերի ձևավորում
4. Տեղեկատվության հավաքագրում, մշակում
5. Թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում
6. Հետազոտական հաշվետվության նախապատրաստում
7. Նախագծի պաշտպանություն (պրեզենտացիա)
8. Արդյունքների ամփոփում

(https://kznakbnagavar.blogspot.com/2022/02/blog-post.html)

Ներկայացնենք մեր կողմից մշակած նախագծային ուսուցման պլանը՝ Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի համար։

Դիցուք, լրագրություն բաժնում մենք դասավանդում ենք հայոց լեզու, և նպատակային է, որ առարկայի ուսուցումը ավարտվի իրական, շոշափելի գործնական արդյունքով։ Մենք պետք է ուսանողներին սովորեցնենք գրական հայերենի ուղղախոսության, բառագործածության, լեզվաոճական առանձնահատկությունները և ստուգենք վերջնարդունքները։

Ուսումնական նախագծի պլանի նմուշ

Ուսումնական նախագծի թեմա *Գրել առարկայական ծրագրի թեման, որի շրջանակում իրականացվելու է նախագիծը։*	
Նախագծի անվանում	Լեզվաոճական մեղանչումները էլեկտրոնային մամուլում և դրանցից խուսափելու ուղիները
Առարկա(ներ)	Լրագրություն, խոսքի վարպետություն, հայոց լեզու և խոսքի մշակույթ, օտար լեզու

Ուսումնական տարի, կիսամյակ	2026-2027, 1-ին կիսամյակ
Կուրս	1-ին
Տևողություն	6 շաբաթ
Նախագծի իրականացման փուլեր	3 փուլ (նախապատրաստական, հիմնական, ամփոփիչ)
Վերջնաժամկետ	Նոյեմբեր 1
Տեսակը	☐ ներառարկայական ☐ միջառարկայական ☐ վերառարկայական
Ձևաչափը	☐տեսական ☐ գործնական ☐անհատական ☐թիմային ☐ընթացիկ ☐ամփոփիչ
Ուսումնական նախագծի նպատակը՝	
Թվարկել, թե որն է ներկայացվող նախագծի նպատակը: 1. *Կազմակերպել համագործակցային միջավայր* 2. *Ուսումնասիրել էլեկտրոնային մամուլը* 3. *Ուսանողի մեջ ձևավորել լեզվառճական ճիշտ և սխալ ձևերը տարբերելու կարողունակություն* 4. *Կատարել սխալների խմբավորում (բառագործածության, լեզվառճական և այլն)* 5. *Ցույց տալ մամուլում տարածված սխալների տիպերը և նշել աղբյուրը* 6.	
Ուսումնական նախագծի վերջնարդյունքները	
Ներկայացնել նախագծի վերջնարդյունքները, որոնք բխում են առարկայական նկարագրից: 1. *Պահպանել մասնագիտական էթիկայի կանոնները* 2. *Հնարավորինս «մաքրել» էլեկտրոնային մամուլի լեզուն լեզվական մեղանչումներից*	

3. *Կարողանալ հաղորդակցվել գրական հայերենով*
4. *Տիրապետել գրավոր և բանավոր հաղորդակցման կանոններին*
5.

Ուսումնական նախագծի նկարագիրը

Մանրամասն շարադրել առաջադրանքի նկարագիրը և քայլերը:

1. *Ուսանողների հետ աշխատանքային միջավայրի ձևավորում*
2. *Աշխատանքային պարագաների ապահովում (բջջային հեռախոս, համակարգիչ, մասնագիտական նյութեր)*
3. *Կիրառվող մասնագիտական և առարկայական գիտելիքների վերանայում*
4.

Կարողություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում

☐ *Սովորել սովորելու կարողունակություն*

☐ *Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն*

☐ *Տնտեսական կարողունակություն*

☐ *Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն*

☐ *Լեզվական գրագիտություն և կարողունակություն*

☐ *Մշակութային կարողունակություն*

☐ *Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն*

☐ *Թվային և մեդիա կարողունակություն*

Մարտահրավերային հարցը/հիմնախնդիրը

Ձևակերպել այն հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը, որի շուրջ պետք է կատարվի նախագծի հետազոտությունը:

Էլեկտրոնային մամուլում տարածված լեզվառճական սխալների ի հայտ բերում

Հիմնական հարցեր

Հետազոտությունն իրականացնելիս ի՞նչ հարցերի պատասխաններ պետք է գտնեն սովորողները:

1. ***Ինչո՞ւ են իրականացնում հանձնարարվող նախագծային աշխատանքը:***

2. Սոցիալական ո՞ր խնդիրն է լուծվում նախագծային աշխատանքի արդյունքում: *3. Արդիական համարվո՞ւմ է նախագծային աշխատանքի թեման:* *4.*
Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն
Հանգամանալից ներկայացնել խմբերի հետազոտության քայլերը, առաջադրանքներն ու հանձնարարականները: *1. Ուսանողների աշխատանքային խմբերի ձևավորում:* *2. Աշխատանքի բաժանում՝ ըստ հմտությունների:* *3. Աշխատանքային պլանի կազմում:* *4. Նախագծի իրականացման համար անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում:*
Ուսումնական նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ

☐ Ամսագիր կամ թերթ, պաստառ/էլ./	☐ Վեբ-կայք
☐ Տեղեկատվական թերթիկ	☐Սահիկաշար
☐ Տեսանյութ	☐ Սոցիալական գովազդ, հոլովակ
☐Զայնվածք (փոդքասթ)	☐ Բուկլետ
☐ Դասընթացներ	☐Կլոր սեղան քննարկում
☐ Մրցույթ/ միջոցառում	☐ Բուկլետ
☐ Ցուցահանդես	☐ Ֆլեշմոբ/ տարածում կայքերում
☐ Առաջարկ պատկան մարմիններին	☐ Նամակ/ ուղերձ

Հետազոտության աղբյուրներ
Անհրաժեշտության դեպքում դասավանդողը տրամադրում է տեղեկատվական

աղբյուրներ։

1. Առարկայական ԱՈՒՄՓ-ներ
2. Ավետիսյան Յու. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016։
3. Ավեստիսյան Հ., Ճիշտը և սխալը, Երևան, 2019։
4. Համացանցային մամուլ
5. Մայեր Վ., Լրագրային գործ, Երևան, 2001։
6. Շալունց Ռ., Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Երևան, 1987։
7. Սարգսյան Լ., ԶԼՄ-ների լեզուն և արդի հայերենի բառապաշարի զարգացման միտումները // ԲԵՀ, 2020, №2(32), էջ 83-92։

Գնահատում

Ներկայացնել ամփոփիչ գնահատման բաղադրիչները։

1. Գործնական կարողություններ – 25
2. Համագործակցային կարողություններ – 25
3. Նախագծի ներկայացում – 50

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայումս Հայաստանի Հանրապետության հանրակրթության շրջանակում (մասնավորապես 7-12-րդ դասարաններում) իրականացվում է նախագծային ուսուցումը (Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. փետրվարի 18-ի հ.05–Լ հրամանի համաձայն) (https://escs.am/files/files/2022-02-23/4a19fe51088ef68d9743c62d3eb90264.pdf)։

Մանկավարժական համալսարանը ուսուցչի որակավորում շնորհող բուհ է, ուստի մանկավարժության արդի մարտահրավերներին ընդառաջ կարևոր ենք համարում ուսանողների շրջանում իրականացնել նախագծային աշխատանքներ՝ տարբեր մասնագիտությունների գիտելիքները աղերսելով խոսքի մշակույթին։

Ցանկացած մասնագիտություն առնչվում է մայրենի լեզվին, մանավանդ մեր պարագայում, երբ գործ ունենք ապագա մանկավարժների հետ, որոնք իրենց մասնագիտությունը դասավանդելու և ավանդելու են հայոց լեզվի միջոցով:

Հետևապես կարծում ենք՝ ցանկացած ֆակուլտետում արդիական է մեր առաջադրած աշխատանքը՝ որպես քայլ հայոց լեզվի սոցիալականացման ճանապարհին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. (2005)**, Մանկավարժություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Մանկավարժ» հրատ.:
2. **Բեռնես Հ., Իսլեր Ռ., Վայդինգեր Վ. (2024)**, Արդյունավետ դասավանդման մեթոդներ, Ձեռնարկ 1-ին, Երևան, https://sites.google.com/aspu.am/btbf/home
3. **Խալաթյան Գ., Թորգոմյան Ս., Հարությունյան Ռ. (2023)**, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Բուհական ձեռնարկ, Երևան, «Մեկնարկ» հրատ.:
4. https://kznakbnagavar.blogspot.com/2022/02/blog-post.html
5. https://escs.am/files/files/2022-02-23/4a19fe51088ef68d9743c62d3eb90264.pdf

REFERENCES

1. **Amirjanyan Yu., Sahakyan A. (2005)**, Mankavarjhowt'yown, Owsowmnakan d'er'nark /Pedagogy, Educational Manual/, Yerevan, “Pedagogist” Publishing House.
2. **Bernes H., Isler R., Weidinger V. (2024)**, Ardyownavet dasavandman met'odner /Effective Teaching Methods/, Handbook 1, Yerevan, https://sites.google.com/aspu.am/btbf/home
3. **Khalatyan G., Torgomyan S., Harutyunyan R. (2023)**, Hayoc lezvi dasavandman met'odika /Armenian Language Teaching Methodology/, University Manual, Yerevan, “Meknark” Publishing House.

4. https://kznakbnagavar.blogspot.com/2022/02/blog-post.html
5. https://escs.am/files/files/2022-02-23/4a19fe51088ef68d9743c62d3eb90264.pdf

Анаит Арутюнян

Проектная работа на основе социализации преподавания армянского языка

Заключение

Ключевые слова и выражения: *проектная работа, армянский язык, речевая культура, социализация, междисциплинарные связи, междисциплинарные отношения, метод исследования, проблемный вопрос.*

Армянский язык, как обязательный предмет, преподается в общеобразовательных школах и в системе высшего образования (за исключением школ и университетов с уклоном в иностранные языки). Обучение языку на разных уровнях в школе направлено на повышение грамотности учащихся и обогащение их словарного запаса. В университете любая специальность преподается на этом языке, и все факультеты изучают предметы армянского языка и речевой культуры.

В современной системе образования широко используется проектное обучение, позволяющее социализировать и популяризировать изучаемый предмет. В рамках нашей статьи мы сначала рассматриваем сущность проектной работы, а затем с её помощью — вопросы социализации преподавания армянского языка.

Проектная работа — это сочетание исследовательских и творческих методов, имеющее основную проблему, которая решается учащимся и преподавателем посредством планирования работы, поиска информации, сравнения и анализа научных и практических фактов. Одна из целей преподавания армянского языка — популяризация литературного армянского языка, а также сокращение и устранение языковых и стилистических ошибок в речи. Литературный армянский язык является языком общения в официальной среде, а также на телевидении, радио, в прессе,

школьных и научных кругах, поэтому, включив проектный метод обучения в университетскую программу, мы можем решить социальную проблему, поскольку любая профессия преподается и передается на родном языке.

Педагогический университет — это высшее учебное заведение, выдающее педагогические квалификации. Поэтому, в ответ на современные вызовы педагогики, мы считаем важным проводить проектную работу среди студентов, сочетающую знания различных профессий с культурой речи.

Любая профессия связана с родным языком, особенно в нашем случае, когда мы имеем дело с будущими педагогами, которые будут преподавать и передавать свои знания на армянском языке.

Таким образом, предлагаемая нами работа актуальна для любого факультета как шаг на пути к социализации армянского языка.

Anahit Harutyunyan

Project work on the basis of socialization of Armenian language teaching

Conclusion

Key words and expressions: *project work, Armenian language, speech culture, socialization, interdisciplinary connections, interdisciplinary relations, research method, problematic issue.*

Armenian is taught as a compulsory subject in general schools and higher education (with the exception of schools and universities with a foreign language focus). Language instruction at various levels in schools is aimed at improving students' literacy and enriching their vocabulary. At university, every major is taught in Armenian, and all departments study Armenian language and speech culture.

Project-based learning is widely used in the modern education system, allowing for the socialization and popularization of the subject. In this article, we first examine the

essence of project-based learning and then, using it, explore the socialization of Armenian language teaching.

Project work is a combination of research and creative methods, which has a main problem that is solved by the student and the teacher by planning the work, searching for information, comparing and analyzing scientific and practical facts. One of the goals of teaching the Armenian language is the popularization of the literary Armenian language, as well as the reduction and elimination of linguistic and stylistic errors in speech. Literary Armenian is the language of communication in the official environment, as well as on television, radio, in the press, in school and academic circles, therefore, by including the project method of teaching in the university program, we can solve the social problem, since any profession is taught and transmitted in the native language.

The Pedagogical University is a higher education institution that awards teaching qualifications. Therefore, in response to contemporary pedagogical challenges, we believe it is important to conduct project work among students that combines knowledge of various professions with language culture.

Any profession is associated with the native language, especially in our case, where we are dealing with future teachers who will teach and impart their knowledge in Armenian. Therefore, the work we propose is relevant for any faculty as a step toward the socialization of the Armenian language.

Անահիտ Հարությունյան – Բանասիրական գիտությունների թեկնածու, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ: Գիտական հետաքրքրությունները՝ գրաբար, հայոց լեզվի պատմություն, ժամանակակից հայոց լեզու: Հեղինակ է 10 գիտական հոդվածի: anahit1881@inbox.ru

Анаит Арутюнян - Кандидат филологических наук, кафедра армянского языка и его преподавания, Армянский Государственный Педагогический Университет им. Х. Абовяна. Круг научных интересов: древнеармянский язык, история армянского языка, современный армянский язык. Автор 10 научных статей. anahit1881@inbox.ru

Anahit Harutyunyan - PhD, lecturer/Chair of the Armenian language and its teaching, ASPU after Kh.Abovyan. Scope of Academic Interests: Old Armenian, History of the Armenian language, Modern Armenian. The author 10 scientific publications. anahit1881@inbox.ru

Խմբագրություն է ուղարկվել 18.06.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 28.06.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.